մայր եկեղեցին, որ հրապարակին միւս ծայրն եղած է, ընդդէմ Ս. Նիկողայ եկեղեցւոյն։ Թրքած տիրապետութեան միջոց քանդուած են Ս. Աւետման և Ս. Նիկողայոս եկեղեցեաց դռներն, և պատուհաններն նիւթ կրակի եղած։ Այժմեան Աստուածամոր Վերափոխման եկեղեցին՝ ոչ Սինանին չինածն է և ոչ Հրիհորի և ոչ Միխնայի հրաշափառ և պայծառ զարդարածը, այլ ինչպէս կը վկայէ հին ճաշոցին նոր յիշատակարանը. ԺԸ դարու վերջին կիսուն մէջ չինուած է, հանդերձ իւր լայնանիստ զանգակատամբ։ Մեծամեծ հըրդեհներ և թշնամեաց յարձակմունքներ՝ այնպիսի զօրաւոր դաս եղած են Կամենիցի հայկազանց՝ որ ստիպուած են ներկայ քարակարկառ շէնքը չինել որ կարենայ դիմանալ հրդեհի դէմ, և թշնամեաց յարձակմանց։ Զի ինչպէս ճակատը՝ նոյն իսկ ամբողջ շէնքն ամբարտակ մի է սրբատաշ քարերով չինած և կրով մածուցած։ Քարէ սանդուխներով վեր կ'ելնըցուի, սիւնազարդ ճակատը, ուստի կը մտնայ եկողն ընկարձակ գաւթի մէջ որ սրահի ձևով դեկեղեցին երեք կողմանէ կը պատէ։ Եթէ շէնքս աւելի հին լիներ, կարելի էր ենթադրել որ այդ սրահը իրրև մատաղատուն չինուած լինի։ Ըստ բերանացի վկայութեան Ռոլլէ հնախօսին այդ ընդարձակ սրահը՝ հեռաւոր տեղերէ եկող ուխտաւորաց ապաստանարան չինուած է, ընդդէմ արևու և անձրևի. վասն զի ընդ համբէն Լեհաստան հռչակեալ են հրաշք Աստուածամօրս Հայոց՝ որ կը պաշտի այս սուրբ Տաճարիս մէջ. այն պատճառաւ ոչ միայն հարուստ ունևորներ ուխտադիր կը լինին առ Տիրամայրս, այլ և չքաւորներ ևս, որք հեռաւոր տեղերէ կու գան, որոց ծածք հարկաւոր է։